

**ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական խորհրդի  
2018թ. փետրվարի 27-ին կայացած նիստի**

Նախագահությամբ՝ ռեկտոր Ա.Լոքյանի

Քարտուղարությամբ՝ գիտական քարտուղար Հ.Ստեփանյանի

Մասնակցությամբ՝ գիտական խորհրդի անդամների (ներկայության թերթիկը կցվում է)

**Օրակարգ՝**

1. Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի կողմից 2017-2018 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանից առաջ ուսանողների շրջանում իրականացրած սոցիալական հարցումների արդյունքների ամփոփում:

Ձեկուցող՝ բաժնի պետ Ա.Գևորգյան

2. Ընթացիկ հարց: Գիտական խորհրդի կազմի փոփոխման հարցը:

Ձեկուցող՝ ռեկտոր Ա.Լոքյան

3. Ընթացիկ հարց: «Մանց» համալսարանի հայցորդ Երանուհի Ստեփանի Թումանյանցի թեկնածուական ատենախոսության թեմայի փոփոխման հարցը:

Ձեկուցող՝ իրավագիտության ամբիոնի վարիչ Ա.Եզեկյան

4. Ընթացիկ հարց: Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով երաշխավորել «ԵՄ-ի հետ և ԵԱՏՄ-ում. նոր մարտահրավերներ և հնարավորություններ Հայաստանի համար» գիտական թեման ներկայացնելու ՀՀ գիտության պետական կոմիտե:

Ձեկուցող՝ թեմայի ղեկավար Նարեկ Գալստյան

5. Ընթացիկ հարց: Կառավարման հոգեբանության ամբիոնի ապիրանտներ Ֆենյա Բեգլարյանի, Ջեմմա Թորգոմյանի թեկնածուական ատենախոսությունների թեմաների հաստատման և գիտական ղեկավարների նշանակման հարցը:

Ձեկուցող՝ կառավարման հոգեբանության ամբիոնի վարիչ Ռ.Աղուզումցյան

6. Ընթացիկ հարց: ՌՀԳՀ-2016 համատեղ հայ-ռուսական գիտական թեմայի շրջանակներում հեղինակներ՝ Ռ. Աղուզումցյանի, Լ. Պետրոսյանի, Ս. Պողոսյանի պատրաստած «Ծառայողական գործունեություն իրականացնող մասնագետների անձի չափորոշիչային ուղղվածությունը» վերտառությամբ մեթոդական ուղեցույցը տպագրության երաշխավորելու հարցը:

Ձեկուցող՝ կառավարման հոգեբանության ամբիոնի վարիչ Ռ.Աղուզումցյան

7. Ընթացիկ հարց: Կառավարման հոգեբանության դասախոս, հոգեբ.գիտ.թեկնածու Սոնա Պողոսյանի «Ստեղծարար կառավարում» դասընթացի մեթոդական ուղեցույցը տպագրության երաշխավորելու հարցը:

Ձեկուցող՝ կառավարման հոգեբանության ամբիոնի վարիչ Ռ.Աղուզումցյան

8. Ընթացիկ հարց: ՀՀ պետական կառավարման ակադեմիայի կառավարման հոգեբանության ամբիոնի ասպիրանտ Վիլյամ Հալաջյանի և հայցորդ Անի Գևորգյանի թեկնածուական ատենախոսությունների գիտական ղեկավարների փոփոխման հարցը:

Ձեկուցող՝ կառավարման հոգեբանության ամբիոնի վարիչ Ռ.Աղուզումցյան

**1. Լսեցին՝** Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի կողմից 2017-2018 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանից առաջ ուսանողների շրջանում իրականացրած սոցիալական հարցումների արդյունքների ամփոփում:

Զեկուցող՝ բաժնի պետ Ա.Գևորգյան

**Արտահայտվեցին՝** Ա.Լոքյանը, Գ.Չատինյանը:

**Որոշեցին՝** Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի կողմից 2017-2018 ուսումնական տարվա առաջին կիսամյակի քննաշրջանից հետո ուսանողների շրջանում իրականացրած սոցիալական հարցումների արդյունքներն ընդունել ի գիտություն (հաշվետվությունը կից ներկայացվում է):

**2. Լսեցին՝** Ընթացիկ հարց: Գիտական խորհրդի կազմի փոփոխման հարցը:

Զեկուցող՝ ռեկտոր Ա.Լոքյան

Զեկուցող Ա.Լոքյանը ներկայացրեց, որ ամբիոնների վարիչների ընտրությունից հետո անհրաժեշտություն է առաջացել վերանայել գիտական խորհրդի կազմը և առաջարկեց հաստատել գիտական խորհրդի հետևյալ կազմը՝

**1. Արսեն Լոքյան**

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ռեկտոր, գիտական խորհրդի նախագահ, հոգեբանական գիտությունների դոկտոր, դոցենտ

**2. Ամալյա Սարիբեկյան**

ՀՀ Նախագահի աշխատակազմի ներկայացուցիչ, տնտեսագիտության թեկնածու պրոֆեսոր

**3. Հրանուշ Հակոբյան**

Իրավագիտության ամբիոնի պրոֆեսոր, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր

**4. Գոռ Չատինյան**

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտատնտեսական աշխատանքների գծով պրոռեկտոր, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

**5. Խաչատուր Բեգիրջյան**

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի լրացուցիչ և շարունակական կրթության գծով պրոռեկտոր, կենսաբանական գիտությունների թեկնածու

**6. Թերեզա Խեչոյան**

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի արտաքին կապերի գծով պրոռեկտոր

**7. Գորիսոն Աղամյան**

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի վարչատնտեսական աշխատանքների գծով պրոռեկտոր, տնտեսագիտության թեկնածու

**8. Հայկ Սարգսյան**

Երևանի պետական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

**9. Արտակ Բաղդասարյան**

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի վերապատրաստման և որակավորման բարձրացման բաժնի պետ, քաղաքագիտության թեկնածու

**10. Արմենակ Այվազյան**

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի լեզուների և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոնի վարիչ, տեխնիկական գիտությունների թեկնածու

**11. Մարիամ Մարգարյան**

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի քաղաքական կառավարման և քաղաքական վերլուծության ամբիոնի վարիչ, քաղաքագիտության դոկտոր, պրոֆեսոր

**12. Վիլեն Խաչատրյան**

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի կառավարման ամբիոնի վարիչ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

**13. Ռուբեն Աղուզումցյան**

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի կառավարման հոգեբանության ամբիոնի վարիչ, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

**14. Արմեն Եզեկյան**

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ամբիոնի վարիչ, իրավագիտության թեկնածու, դոցենտ

**15. Լուսինե Զիֆուղարյան**

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ուսումնամեթոդական վարչության պետ

**16. Նաիրա Ղազարյան**

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ասպիրանտուրայի բաժնի պետ, փիլիսոփայական գիտությունների թեկնածու

**17. Ավետիս Գևորգյան**

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի մասնագիտական կրթության որակի ապահովման բաժնի պետ, տնտեսագիտության թեկնածու

**18. Հասմիկ Ստեփանյան**

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գիտական քարտուղար, գիտական խորհրդի նիստի քարտուղար, իրավագիտության ամբիոնի դոցենտ, իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ

**19. Լաուրա Պետրոսյան**

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի արհեստակցական կազմակերպության նախագահ, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

**20. Գայանե Հովհաննիսյան**

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավախորհրդատու

**21. Արմեն Խաչատրյան**

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի ուսանողական խորհրդի նախագահ, Քաղաքագիտության ամբիոնի առկա ուսուցման 1622 թողարկման մագիստրանտ

**22. Նարեկ Խաչումյան**

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի Կառավարման ամբիոնի առկա ուսուցման 1622 թողարկման մագիստրանտ

**23. Աիդա Մելքոնյան**

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի Իրավագիտության ամբիոնի առկա ուսուցման 1723 թողարկման մագիստրանտ

**24. Թագուհի Ծատինյան**

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի Կառավարման հոգեբանության ամբիոնի առկա ուսուցման 1723 թողարկման մագիստրանտ

**25. Արամ Կոստանյան**

ՀՀ պետական կառավարման ակադեմիայի Քաղաքագիտության ամբիոնի առկա ուսուցման 1622 թողարկման մագիստրանտ

**Արտահայտվեցին՝ Գ.Զատինյանը, Գ.Ադամյանը:**

**Որոշեցին՝** Հաստատել գիտական խորհրդի ներկայացված կազմը:

**3. Լսեցին** Ընթացիկ հարց: Երևանի «Մանց» համալսարանի հայցորդ Երանուհի Ստեփանի Թումանյանցի թեկնածուական ատենախոսության թեմայի փոփոխման հարցը:

Զեկուցող՝ իրավագիտության ամբիոնի վարիչ Ա.Եզեկյան

Ձեկուցողը նշեց, որ Իրավագիտության ամբիոնում 2018թ. փետրվարի 7-ի նիստում քննարկվել է Երևանի «Մանց» համալսարանի հայցորդ Երանուհի Ստեփանի Թումանյանցի «Դատական իշխանության ինքնուրույնությունը որպես սահմանադրական սկզբունք» թեկնածուական ատենախոսության նախնական պաշտպանության հարցը: Ամբիոնի դասախոսներ Գ.Դանիելյանը, Ա.Խաչատրյանը, Հ.Ստեփանյանը նշեցին, որ ատենախոսությունը վերնագրված է «Դատական իշխանության ինքնուրույնությունը որպես սահմանադրական սկզբունք» վերտառությամբ: Մինչդեռ դատական իշխանության ինքնուրույնության սկզբունքը ամրագրված չէ ՀՀ Սահմանադրությունում որպես առանձին սկզբունք, և ամբիոնի նիստում կայացված որոշմամբ առաջարկում են գիտական խորհրդին Երանուհի Թումանյանցի թեման փոխել «Ինքնուրույնության սկզբունքը դատական իշխանության համակարգում՝ սահմանադրական բարեփոխումների համատեքստում» վերտառությամբ:

**Արտահայտվեցին՝** Գ.Հովհաննիսյանը, Հ.Ստեփանյանը, Ա.Եզեկյանը:

**Որոշեցին՝** Երևանի «Մանց» համալսարանի հայցորդ Երանուհի Ստեփանի Թումանյանցի թեկնածուական ատենախոսության թեման փոխել «Ինքնուրույնության սկզբունքը դատական իշխանության համակարգում՝ սահմանադրական բարեփոխումների համատեքստում» վերտառությամբ:

**4. Լսեցին՝** Ընթացիկ հարց: Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով երաշխավորել «ԵՄ-ի հետ և ԵԱՏՄ-ում. նոր մարտարհրավերներ և հնարավորություններ Հայաստանի համար» գիտական թեման ներկայացնելու ՀՀ գիտության պետական կոմիտե:

Ձեկուցող թեմայի ղեկավար Նարեկ Գալստյան

Ձեկուցողը ներկայացրեց թեմայի արդիականությունը, նախատեսվող աշխատանքները և աշխատանքային խումբը (կից ներկայացվում է թեմայի նախագիծը):

**Արտահայտվեցին՝** Ա. Լոքյանը, Մ.Մարգարյանը:

**Որոշեցին՝** Երաշխավորել «ԵՄ-ի հետ և ԵԱՏՄ-ում. նոր մարտարհրավերներ և հնարավորություններ Հայաստանի համար» գիտական թեման ներկայացնելու ՀՀ գիտության պետական կոմիտե՝ գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման նպատակով:

**5. Լսեցին՝** Ընթացիկ հարց: Կառավարման հոգեբանության ամբիոնի ասպիրանտներ Ֆենյա Բեզլարյանի, Ջեմմա Թորգոմյանի թեկնածուական ատենախոսությունների թեմաների հաստատման և գիտական ղեկավարների նշանակման հարցը:

Ձեկուցողը ներկայացրեց, որ Կառավարման հոգեբանության ամբիոնում 23.02.2018թ. կայացած նիստում քննարկվել է ամբիոնի ասպիրանտներ Ֆենյա Բեզլարյանի, Ջեմմա Թորգոմյանի թեկնածուական ատենախոսությունների թեմաների հաստատման և գիտական ղեկավարների նշանակման հարցը և ամբիոնի նիստում կայացրած որոշմամբ առաջարկում են գիտական խորհրդին՝

1) Կառավարման հոգեբանության ամբիոնի ասպիրանտ Ֆենյա Բեզլարյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Անձի մասնագիտական այրման ձևավորման հոգեբանական առանձնահատկությունների փոխապայմանավորվածությունը գործունեության պայմաններից» վերտառությամբ՝ ԺԹ.00.01-«Ընդհանուր հոգեբանություն»,

հոգեբանության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ և գիտական ղեկավար նշանակել հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սրբուհի Գևորգյանին:

2) Կառավարման հոգեբանության ամբիոնի ասպիրանտ Ջեմմա Թորգոմյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Անձի սպառողական վարքում որոշման կայացման հոգեբանական գործոնները» վերտառությամբ՝ ԺԹ.00.01-«Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ և գիտական ղեկավար նշանակել հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սրբուհի Գևորգյանին:

**Արտահայտվեցին՝** Ա.Լոքյանը, Լ.Պետրոսյանը:

**Որոշեցին՝**

1. Կառավարման հոգեբանության ամբիոնի ասպիրանտ Ֆենյա Բեզլարյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Անձի մասնագիտական այրման ձևավորման հոգեբանական առանձնահատկությունների փոխապայմանավորվածությունը գործունեության պայմաններից» վերտառությամբ՝ ԺԹ.00.01-«Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ և գիտական ղեկավար նշանակել հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սրբուհի Գևորգյանին:

2. Կառավարման հոգեբանության ամբիոնի ասպիրանտ Ջեմմա Թորգոմյանի թեկնածուական ատենախոսության թեման հաստատել «Անձի սպառողական վարքում որոշման կայացման հոգեբանական գործոնները» վերտառությամբ՝ ԺԹ.00.01-«Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ և գիտական ղեկավար նշանակել հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Սրբուհի Գևորգյանին:

**6. Լսեցին՝** Ընթացիկ հարց: ՌՀԳՀ-2016 համատեղ հայ-ռուսական գիտական թեմայի շրջանակներում հեղինակներ՝ Ռ.Աղուզումցյանի, Լ.Պետրոսյանի, Ս.Պողոսյանի պատրաստած «Ծառայողական գործունեություն իրականացնող մասնագետների անձի չափորոշիչային ուղղվածությունը» վերտառությամբ մեթոդական ուղեցույցը տպագրության երաշխավորելու հարցը:

**Արտահայտվեցին՝** Ա.Լոքյանը, Ա.Եզեկյանը:

**Որոշեցին՝** ՌՀԳՀ-2016 համատեղ հայ-ռուսական գիտական թեմայի շրջանակներում հեղինակներ՝ Ռ.Աղուզումցյանի, Լ.Պետրոսյանի, Ս.Պողոսյանի պատրաստած «Ծառայողական գործունեություն իրականացնող մասնագետների անձի չափորոշիչային ուղղվածությունը» վերտառությամբ մեթոդական ուղեցույցը երաշխավորել տպագրության:

**7. Լսեցին՝** Ընթացիկ հարց: Կառավարման հոգեբանության դասախոս, հոգեբ. գիտ. թեկնածու Սոնա Պողոսյանի՝ «Ստեղծարար կառավարում» դասընթացի մեթոդական ուղեցույցը տպագրության երաշխավորելու հարցը:

**Արտահայտվեցին՝** Ռ.Աղուզումցյանը, Լ.Պետրոսյանը:

**Որոշեցին՝** Կառավարման հոգեբանության դասախոս, հոգեբ. գիտ. թեկնածու Սոնա Պողոսյանի «Ստեղծարար կառավարում» դասընթացի մեթոդական ուղեցույցը երաշխավորել տպագրության:

**8. Լսեցին՝** Ընթացիկ հարց: ՀՀ պետական կառավարման ակադեմիայի Կառավարման հոգեբանության ամբիոնի ասպիրանտ Վիլյամ Հալաջյանի և հայցորդ Անի Գևորգյանի թեկնածուական ատենախոսությունների գիտական ղեկավարների փոփոխման հարցը:

**Արտահայտվեցին՝** Ա.Լոքյանը, Մ.Մարգարյանը, Ա.Սարիբեկյանը:

**Որոշեցին՝** Ձեկուցողը ներկայացրեց, որ Կառավարման հոգեբանության ամբիոնում 23.02.2018թ. կայացած նիստում քննարկվել է ամբիոնի ասպիրանտ Վիլյամ Հալաջյանի և հայցորդ Անի Գևորգյանի թեկնածուական ատենախոսությունների գիտական ղեկավարների փոփոխման հարցը և ամբիոնի նիստում կայացրած որոշմամբ առաջարկում են գիտական խորհրդին՝

1) Կառավարման հոգեբանության ամբիոնի ասպիրանտ Վիլյամ Հալաջյանի «Հանրային ծառայողի հոգեկան աշխատունակությունը կարգավորող տեսաձայնային ներազդման մեթոդի արդյունավետությունը» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության գիտական ղեկավար՝ հոգեբանական գիտությունների դոկտոր Հրանտ Ավանեսյանի փոխարեն գիտական ղեկավար նշանակել՝ հոգեբանական գիտությունների դոկտոր Արսեն Լոքյանին:

2) Կառավարման հոգեբանության ամբիոնի հայցորդ Անի Գևորգյանի «Անձի մասնագիտական գործունեությունում վարքային հակազդումների մոդելավորման հոգեբանական չափանիշները (ԱԻՆ աշխատողի օրինակով)» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության գիտական ղեկավար՝ հոգեբանական գիտությունների դոկտոր Արսեն Լոքյանի փոխարեն գիտական ղեկավար նշանակել՝ հոգեբանական գիտությունների դոկտոր Հրանտ Ավանեսյանին:

Գիտական խորհրդի նիստի նախագահ՝

Ա.Լոքյան

Գիտական խորհրդի նիստի քարտուղար՝

Հ.Ստեփանյան

27 փետրվարի 2018թ.

Կ.Տ.